

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ

ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին

«31» մարտի 2017թ.

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Արամի փ., 64, թիվ 143 տարածք

(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրու- թյուններ	03.02.2017-31.03.2017
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	43,969
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(22,189)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		21,780
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	-
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(101)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		(101)
Եկամուտ շահաբաժիններից	5	-
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	6	51,509
Այլ գործառնական եկամուտներ	7	-
Գործառնական եկամուտներ		73,189
Զուտ մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	8	-
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(2,782)
Այլ գործառնական ծախսեր	10	(17)
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումներից զուտ շահույթ (վնաս)	11	-
Շահույթը (վնասը) մինչև հարկումը		70,390
Շահութահարկի գծով ծախս (Եկամուտ)	12	14,159
Ժամանակաշրջանի շահույթ (վնաս)		56,231
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Այլ համապարփակ եկամուտներ		
ԸՆԴԱՍԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ		56,231
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	13	0.703
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նոսրացված շահույթ	13	0.703

ԿՏ

Ներդրումային ընկերության գործադիր Տնօրեն՝ Արսեն Միմոնյան
Գլխավոր հաշվապահ «ԷՅ ԷՆ Աուդիտ» ՓԲԸ
ի դեմս լիազորված ներկայացուցիչ
Արգամ Աբրահամյանի

Հաշվետվության վավերացման ամսաթիվը

19.05.2017թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Ֆինանսական դրության մասին

«31» մարտի 2017թ.

«Կուր Ինվեսթ» ՓԲԸ ՀՀ, ք. Երևան, Արամի փ., 64, թիվ 143 տարածք
(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	31.03.17	31.12.16
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	-	-
1.2	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	19,284	-
1.3	Պահանջներ հաճախորդների նկատմամբ	16	-	-
1.4	Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ	17	1,589,105	-
1.5	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	18	-	-
1.6	Սինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	19	2,158,883	-
1.7	Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում	20	-	-
1.8	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	21	626	-
1.9	Հետաձգված հարկային ակտիվներ	22	-	-
1.10	Այլ ակտիվներ	23	1,472	-
	Ընդամենը՝ ակտիվներ		3,769,370	-
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24	3,367,655	-
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	-	-
2.3	Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ	26	-	-
2.4	Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթեր	27	-	-
2.5	Հետաձգված հարկային պարտավորություններ	28	10,284	-
2.6	Պահուստներ	29	91	-
2.7	Այլ պարտավորություններ	30	5,109	-
	Ընդամենը՝ պարտավորություններ		3,383,139	-
3	Սեփական կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	31	330,000	-
3.2	Էմիսիոն եկամուտ	32	-	-
3.3	Պահուստներ՝			
3.3.1	Գլխավոր պահուստ			
3.3.2	Վերագնահատման պահուստներ		-	-
3.4	Զբաղիված շահույթ (վնաս)	35	56,231	-
3.5	Սեփական կապիտալի այլ տարրեր	32	-	-
	Մայր կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		386,231	-
	Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		3,769,370	-

Ներդրումային ընկերության գործադիր Տնօրեն՝ Արսեն Միմոնյան
Գլխավոր հաշվապահ «ԷՅ ԷՆ Աուդիտ» ՓԲԸ
ի դեմս լիազորված ներկայացուցիչ՝
Արգամ Աբրահամյանի

8. Մնացորդը նախորդ ժամանակաշրջանի համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 31 մարտի 2016թ. (ստուգված/չստուգված)																	
Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)																	
9. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում առ 03 փետրվարի 2017թ. (ստուգված/չստուգված)																	
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը																	
10. Վերահաշվարկված մնացորդը																	
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝																	
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	330,000		330,000											330,000			330,000
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին																	
12. Այլ համապարփակ եկամուտ														72,394			72,394
13. Շահութաբաժիններ																	
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝																	
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում																	
15. Ներքին շարժեր, այդ թվում՝																	
15.1. Սահանումներ գլխավոր պահուստին																	
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում																	
15.3. Էմիսիոն վնասի ծածկում																	
15.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում																	
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր																	
16. Մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում 31 մարտի 2017թ.	330,000		330,000											72,394			402,394

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.04.2017թ.

ԿՏ

Ներդրումային ընկերության գործադիր Տնօրեն՝ Արսեն Միսոնյան
 Գլխավոր հաշվապահ «ԷՅ ԷՆ Աուդիտ» ՓԲԸ՝ ի դեմս
 լիազորված ներկայացուցիչ
Արզամ Աբրահամյանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

«31» մարտի 2017թ

Կուրս Ինվեսթ ՓԲԸ ԶԶ, ք. Երևան, Արամի փ., 64, թիվ 143 տարածք

(ներդրումային ընկերության անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություն	03.02.17-31.03.17
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		X
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		
Ստացված տոկոսներ		-
Վճարված տոկոսներ		(19,072)
Ստացված կոմիսիոն գումարներ		-
Վճարված կոմիսիոն գումարներ		(1,110)
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից օգուտ (վնաս)		-
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ (վնաս)		-
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		-
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(738)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ		-
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		
Գործառնական ակտիվներում նվազում (ավելացում)		(3,652,509)
այդ թվում՝		
Փոխափոխությունների նվազում (ավելացում)		-
Շահույթ կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների նվազում (ավելացում)		(3,652,509)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում		-
Այլ գործառնական ակտիվների նվազում (ավելացում)		-
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		-
այդ թվում՝		
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում (նվազում)		-
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		-
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		(3,673,429)
Վճարված շահութահարկ		-
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		(3,673,429)
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		X
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)		-
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)		-
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,825)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		-
Չուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(1,825)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		X
Վճարված շահաբաժիններ		-
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		-
Ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		3,364,538
Ներդրումային ընկերության կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		-
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		330,000
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում		-
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից		-
Չուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		3,694,538
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		19,284
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում		-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում		19,284

Ներդրումային ընկերության գործադիր Տնօրեն՝ Արսեն Սիմոնյան
Գլխավոր հաշվապահ «ԷՅ ԷՆ Աուդիտ» ՓԲԸ
ի դեմս լիազորված ներկայացուցիչ՝
Արզամ Աբրահամյանի

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 19.05.17թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն ստեղծվել է 2017թ.:

2017թ. փետրվարի 3-ին Ընկերությունը գրանցվել է ՀՀ ԿԲ-ում որպես ներդրումային ընկերություն և ստացել է իր անունից և իր հաշվին արժեթղթերով գործարքների կատարման թիվ 0013 լինցենզիան:

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ի ղեկավար մարմիններն են բաժնետերերի ընդհանուր ժողովը և գործադիր տնօրենը: Գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնում է Արսեն Սիմոնյանը:

Ընկերության ղեկավարության վարձատրության չափը որոշվում է կառավարման համապատասխան մարմնի որոշմամբ:

Ընկերության բաժնետերերն են հանդիսանում Արմեն Տեր-Հակոբյանը և Արմինե Նաջարյանը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրված են 2017թ. մայիսի 19-ին:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները

2.1 Համապատասխանությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ), ՀՀ ԿԲ-ի կողմից հաստատված համապատասխան իրավական նորմատիվ ակտերին (այնքանով, որքանով դրանք տեղավորվում են ՖՀՄՍ շրջանակում) և Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

2.2 Չափման հիմունքները

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվների, որոնք վերաչափվում են իրական արժեքով:

2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներկայացված են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

2.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հողվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (կորուստ) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

Տոկոս

Տոկոսային եկամուտը և ծախսը՝ ներառյալ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը, ճանաչվում են շահույթում կամ վնասում համապատասխանաբար որպես տոկոսային եկամուտ կամ տոկոսային ծախս:

Արժեթղթերով գործարքներ և ներդրումային եկամուտ

Արժեթղթերով գործարքները հաշվառվում են գործարքի (արժեթղթերի վաճառքի կամ գնման) ամսաթվին: Տոկոսային եկամուտը հաշվառվում է հաշվեգրման սկզբունքով: Շահաբաժինների տեսքով եկամուտը հաշվառվում է նախորդ շահաբաժնի ամսաթվին: Արժեթղթերի արժեքը հաշվարկվում է՝ միջին կշռված ինքնարժեքի հիմունքով:

Ինչ վերաբերում է կարճաժամկետ և ֆիքսված եկամտաբերությամբ ներդրումներին, զեղչերը և էմիսիոն եկամուտները ամորտիզացվում են և հաշվառվում են ներդրումային եկամուտում: Վաճառված արժեթղթերի արժեքը հաշվարկվում է ամորտիզացված արժեքի հիմքով:

Վճարներ և կոմիսիոն ծախսեր

Վճարները և կոմիսիոն ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ծառայությունների կատարումից հետո:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր

գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ. Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ ա) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, գ) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, դ) վարկեր և դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեղջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,

- եթե նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության

համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ

- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ. Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը կամ:

Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակագրվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ՝ գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով ճանաչվող ֆինանսական ակտիվներ:

Վարկեր և դեբիտորական պարտքեր. Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում դասակարգվում են որպես «վարկեր և դեբիտորական պարտքեր»: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեքը կամ: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը էական ազդեցություն չէր ունենա:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով

շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը ինչպես նաև ստացված հատույցի դիմաձ գրավադրված փոխառությունը:

Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող կամ որպես այլ ֆինանսական պարտավորություններ:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող Ֆինանսական պարտավորություններ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ օգտագործվում որպես հեղձավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ՝
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- Այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. Ֆինանսական գործիքներ: Ճանաչումը և չափումը թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ

վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով:

Այլ ֆինանսական պարտավորություններ. այլ ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում. Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Հիմնական միջոցներ

(a) Ճանաչումը և չափումը

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանը և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

(b) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

(c) Մաշվածություն

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Համակարգչային տեխնիկա 3-5 տարի

Տնտեսական և գրասենյակային գույք, այլ հիմնական միջոցներ 5 տարի:

Մաշվածության հաշվարկման մեթոդները, օգտակար ծառայությունները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջի դրությամբ և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են:

Ոչ նյութական ակտիվներ

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Հետագա ծախսումները կապիտալացվում են, երբ դրանք ավելացնում են այն կոնկրետ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները, որին դրանք վերաբերում են: Բոլոր մնացած հետագա ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարման ժամանակ:

Ամորտիզացիան հաշվարկվում է ամորտիզացվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային հիմունքով՝ ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

Էական սխալների ուղղման և հաշվապահական հաշվառման քաղաքականությունում փոփոխությունների ազդեցության արտացոլման մոտեցումները՝ նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը, արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվություններում՝ ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Համադրելի տեղեկատվությունը վերաներկայացվում է, քանի դեռ դա իրագործելի է:

Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը՝ փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Փոխառության ծախսումների հաշվառման մոտեցումը՝ փոխառության ծախսերը ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվում (հաշվեգրվում) են, բացառությամբ որակավորվող ակտիվներին վերաբերողները, որոնք կապիտալացվում են ՀՀՄՍ 23-ին համապատասխան: Վարկերը և փոխառությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող (ԱՆՊ) ֆինանսական ակտիվները յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ վերաչափվում են իրական արժեքով՝ իրական արժեքից առաջացող օգուտները (կորուստները) ճանաչելով տվյալ ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում՝ որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող ներդրումների իրական արժեքի փոփոխությունից զուտ եկամուտ՝ ներառելով առևտրային գործունեությունից զուտ եկամուտների կազմում: ԱՆՊ ֆինանսական ակտիվների վաճառքի դեպքում դրանց վաճառքից ստացվող (ստացվելիք) գումարը և վաճառված ԱՆՊ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի (ներառյալ՝ իրական արժեքով ճշտումները) տարբերությունը ներկայացվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող առևտրական նպատակներով պահվող ներդրումների առքուվաճառքից զուտ եկամուտ:

ՌԵՊՈ պայմանագրով ստացված և տրված արժեթղթեր՝ ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերը հաշվառվում են արտահաշվեկշռում՝ որպես տրամադրված փոխառությունների ապահովություն: ՌԵՊՈ պայմանագրերով ստացված արժեթղթերի դիմաց վճարված գումարները հաշվառվում են որպես տրամադրված փոխառություններ: Դրանց գծով ստացվող տոկոսները հաշվեգրման հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում և ներկայացվում այլ գործառնական եկամուտների կազմում: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերը հաշվառվում են հաշվեկշռում՝ իրենց բնույթին համապատասխան: ՌԵՊՈ պայմանագրերով տրված արժեթղթերի դիմաց ստացված գումարները հաշվառվում են որպես ստացված փոխառություններ:

